

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՐԻՈՒՄ

---

Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը հունվարի 24-ին քաղաքացիների ընդունելություն կատարեց Մեղրի համայնքում:

Նախապես հերթագրվել էր 13 քաղաքացի, ընդունելության եկավ 21 հոգի՝ բազմաբնույթ հարցերով:

Մարզպետին դիմեց.

- աշխատանքի տեղավորման խնդրանքով 6 հոգի, եւ նրանց տվյալները հաշվառվեցին՝ լուծումներ գտնելու համար,
- առողջապահական հարցերով՝ 2 հոգի. նրանց խնդիրը կուսումնասիրվի,
- ֆինանսական աջակցության դիմումով՝ 6 քաղաքացի, որոնք բավարարվեցին,
- 3 ընտանիք՝ բնակարանի պահանջով,
- 1 հոգի՝ գյուղատնտեսության զարգացման հետ կապված հարցով,
- 3 հոգի, բայց ընդհանուր խնդրով՝ բազմաթիվ բնակիչների անունից, բարձրաձայնեցին ոռոգման ջրի բացակայության մասին. նրանք եկել էին Արաքսաշեն թաղամասից, Վանք գյուղից եւ Փարամազի փողոցից: Այս խնդիրն առավել մանրամասնորեն ուսումնասիրելու եւ լուծումներ առաջարկելու համար առաջիկայում տեղում կլինի մարզպետարանի քաղաքաշինության վարչության մասնագետների խումբը:

24.01.2019թ.